Շախմատային ընկերություն

Ինչպե՞ս կարող էին նրանք խաղալ, եթե չէին կարողանում հասկանալ միմյանց:

Օլիվիա Քիթերման
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Գերմանիայում:

«Արև է շողում իմ հոգում այսօր»* Երգում էր Մատվեյը: Նրա մայրը և եղբայրը՝ Տիմոֆեյը երգում էին նրա հետ: Մեքենայի պատուհանից դուրս մութ էր: Բայց երգն օգնեց, որ ամեն ինչ մի քիչ ավելի պայծառ թվար:

Դա սարսափելի ժամանակ էր Մատվեյի և նրա ընտանիքի համար: Նրանք տեղափոխվում էին Գերմանիա, որովհետև նրանց տունն այլևս ապահով չէր: Նրանք ճանապարհորդել էին երկու օր և այժմ նրանք գրեթե հասել էին: Մի եպիսկոպոս Գերմանիայում մեքենայով նրանց տանում էր բնակատեղի:

Մատվեյը ուրախ էր, որ Երկնային Հայրն օգնեց իրենց ապահով Գերմանիա հասնել: Բայց նա կարոտում էր հայրիկին: Նա ստիպված էր մնալ իրենց երկրում պատերազմի պատճառով: Մատվեյը շատ էր անհանգստանում նրա համար:

Եպիսկոպոսը մեքենան կայանեց տնից դուրս մի տեղ: «Բարի գալուստ իմ տուն»:

Մատվեյը վերցրեց իր պայուսակը և իր ընտանիքի հետ ներս մտավ: Լռություն էր: Եպիսկոպոսի ընտանիքը պետք է որ արդեն քնած լիներ:

«Դուք կարող եք մնալ Մաթսի և Լորեի սենյակներում, քանի դեռ դուք այստեղ եք», - ասաց եպիսկոպոսը:

«Սպասեք»,- ասաց մայրիկը: «Նրանք պարտավոր չեն իրենց սենյակները մեզ տրամադրել»:

Եպիսկոպոսը ժպտաց: «Նրանք ուրախ են այդ անելու համար: Մենք ցանկանում ենք, որ դուք հարմարավետ զգաք»:

Մայրը գլխով արեց: «Շնորհակալություն»:

Առավոտյան Մատվեյն ու Տիմոֆեյը գնացին խոհանոց նախաճաշելու: Եպիսկոպոսը նստած էր սեղանի մոտ մի տղայի և աղջկա հետ: Նրանք այնքան էլ մեծ չէին երևում Մատվեյից:

«Սրանք իմ երեխաներն են՝ Մաթսը և Լորեն»,- ասաց եպիսկոպոսը:

«Ուրախ եմ ծանոթության համար», - ասաց Տիմոֆեյը:

Մաթսը և Լորեն մի քիչ շփոթված էին երևում:

«Նրանք չեն խոսում ձեր լեզվով»,- ասաց եպիսկոպոսը: «Բայց ես համոզված եմ, որ դուք լավ ընկերներ կլինեք»:

Մատվեյը խոժոռվեց: Ինչպե՞ս կարող են իրենք ընկերներ լինել, եթե չեն կարողանում խոսել միմյանց հետ: Նա զգաց, որ արևի շողը, որի մասին երգում էր երեկ երեկոյան, անհետացել էր:

Նախաճաշելուց հետո Մաթսը և Լորեն նրանց ցույց տվեցին խաղասենյակը: Երկու փոքրիկ երեխաներ խաղում էին խաղալիքներով: Մատվեյը ենթադրեց, որ նրանք Մաթսի և Լորեի եղբայրներն էին:

Մաթսն ինչ որ բան ասաց: Այն հնչեց հարցի ձևով, բայց Մատվեյը չհասկացավ, թե նա ինչ ասաց: Մաթսը նստեց ու քարտերով լի մի արկղ բացեց: Նա դրանք դասավորեց կույտերով: Հետո նա և Լորեն վերցրեցին իրենց քարտերը: Մատվեյն ուզում էր խաղալ: Բայց նա չգիտեր ինչպես:

Մաթսը վար դրեց քարտը և նայեց Մատվեյին: Նա նորից ինչ որ բան ասաց:

Մատվեյն ուզում էր լաց լինել: Նա չէր ցանկանում ապրել Գերմանիայում, եթե չէր կարողանալու հասկանալ որևէ մեկին:

Լորեն ինչ-որ բան ասաց Մաթսին, հետո վազեց դեպի հանդերձասենյակը: Նա վերադարձավ և նոր խաղ դրեց հատակին:

Մատվեյը գիտեր այդ խաղը: Փայտյա խաղաքարերը տանը իր ունեցածի նման էին: Դա շախմատ էր: Նա ժամերով շախմատ էր խաղացել իր հայրիկի հետ: Մատվեյն ուրախ գլխով արեց: Նա գիտեր, թե ինչպես խաղար այդ խաղը:

Լորեն լայն ժպտաց և սկսեց շարել խաղաքարերը:

Մատվեյը շարժեց իր զինվորը երկու քառակուսի և նայեց. թե ինչպես Լորեն շարժեց իր ձին: Այդ ժամանակ Մատվեյը շարժեց իր փիղը դեպի Լորեի ձին: Նա և Տիմոֆեյը ծափահարեցին: Լորեն հիասթափված ձայն արձակեց, բայց նա ժպտում էր:

Նրանք երկար ժամանակ խաղացին: Շուտով նրանք ծիծաղում էին: Նրանք չէին հասկանում միմյանց խոսքերը, բայց այնուամենայնիվ զվարճանում էին:

Հաջորդ մի քանի շաբաթների ընթացքում նրանք գտան այլ խաղեր, որոնք նրանք բոլորը գիտեին: Նրանք ֆուտբոլ էին խաղում դրսում ուրիշ գերմանացի երեխաների հետ: Մատվեյը սովորել էր նաև մի քանի բառ գերմաներենով: Նա երբեմն սխալներ էր անում, բայց շարունակում էր փորձել:

Մատվեյը դեռ կարոտում էր իր հայրիկին և իրենց տունը: Բայց նա երախտապարտ էր, որ Երկնային Հայրն օգնեց իրեն նոր ընկերներ գտնել: ●

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՀԱՆՆԱ ԼԻ

* Hymns, no. 227.